ՀԱՐՑԱԹԵՐԹ

1. Ըստ անհրաժեշտության՝ կետերի փոխարեն լրացրո՛ւ համապատասխան տառերը։

Հայասա երկրից եմ գալիս, որն ինձ պատգամեց, թե «ինքդ քեզ հա՛յ ասա», իսկ դա մարդկության հնագույն օ.....աններից մեկն է աշխար...ում։

Նաիրի երկրից եմ գալիս՝ անսանձ զետերի ինքնիշխան երկրից, և Բիայնա երկրից, որտեղ բեր...եր էի կառուցում և փորագրում Եր...անի ծննդյան սեպագիր վկայականը։

Սևանա լճից եմ գալիս, որտեղ Արգիշտի արքա...ի խնջույ...ների համար որսում էի այն արքա...ական ձուկը, որի վրա իմ ցեղի արյան հետքերը կային դրոշ...ված։

Տիգրանակերտից եմ գալիս, ուր ամուր դրեցի երեք ծովի ջրերով ողողվող իմ հզոր պետության գահը։

Սասնա բար...րիկ սարերից եմ գալիս, որտեղ անընդ...մեջ պայքարելիս ապավինեցի հեք.....թին ու հրաշքին՝ գառնարա... Դավթի կայծակ սրով դուրս վ...նդելով իմ հողից թշնամու անհամար զորքը։

Արագածի լանջերից եմ գալիս, որտեղից մի օր սանձեցի տիեզերական ճառագայթների կապույտ նժույ...ը, և Բյուրականից, որտեղ զր.....ցի եմ նստում հեռավոր մոլորակների ու աստղերի հետ։

Որտեղի՜ց ասես, որ չեմ գալիս ես՝ հավեր...ող հայ ազգս։ Ահա թե ով եմ ես։

2. Շարադրանքից դո՛ւրս գրիր հետևյալ բառերի հոմանիշները՝ կազմելով հոմանշային զույգեր.

ծննդավայր, ամրոց, խրախճանք, ավանդել, ոսոխ, հնազանդեցնել, անկախ, վտարել

3. Շարադրանքից դո՛ւրս գրիր հետևյալ բառերի հականիշները՝ կազմելով հականշային զույգեր.

անուժ, ավերել, հրավիրել, մերձակա, նորօրյա

4. Շարադրանքից դո՛ւրս գրիր շեշտափոխական հնչյունափոխությամբ կազմված 7 բառ կամ բառաձև՝ փակագծերում գրելով արմատի կամ հիմքի անհնչյունափոխ տարբերակը։ Օրինակ՝ *իջնել (էջ)։*

5. Շարադրանքից դո՛ւրս գրիր 8 տարբեր ածանցներով մեկական բառ՝ ամեն ածանցով կազմելով ևս մեկ բառ։

6. Շարադրանքից դո՛ւրս գրիր 6 բարդ կամ բարդ ածանցավոր բառ։

7. Շարադրանքից դո՛ւրս գրիր հետևյալ իմաստներն ունեցող բառերը. 1. «հույսը դնել մեկի կամ մի բանի վրա», 2. «հեծնելու ընտիր ձի»։

8. Շարադրանքում տեղ գտած պարզ բառերից ու արմատներից 6-ը որպես վերջնաբաղադրիչ օգտագործելով՝ կազմի՛ր դրանցով 1-ական այնպիսի բազմավանկ բառեր, որոնց հոգնակին կազմվում է *-եր* վերջավորությամբ: Օրինակ՝ *խաղալիք – սկզբնախաղեր:*

9. Շարադրանքից դո՛ւրս գրիր 3 այնպիսի գոյականներ, որոնք կարող ես դարձնել բայեր: Օրինակ՝ *քար > քարանալ*:

10. Շարադրանքից դո՛ւրս գրիր 5 անկանոն բայ:

11. Շարադրանքից դո՛ւրս գրիր 5 անկախ դերբայ (ոչ ձևաբայ):

12. Շարադրանքից դո՛ւրս գրիր դերանվանական հոլովման ենթարկվող 5 բառ:

13. Շարադրանքից դո՛ւրս գրիր չեզոք սեռի 5 բայ:

14. Գրի՛ր շարադրություն՝ «Մարդու բնավորության ամենակարևոր գիծը’ վերնագրով (1 – 1,5 էջ):

Հատկորոշիչ

Հարցարանը կազմված է 14 առաջադրանքից, որոնք վերաբերում են 5-7-րդ դասարաններում հայոց լեզվից անցած նյութերին: Հարցարանի առավելագույն միավորը 100 է:

1-ին առաջադրանքի առավելագույն միավորը 10 է, որից ամեն սխալի կամ լուծման բացակայության համար հանվում է 1 միավոր: Լուծումներն են՝ *օրրան, աշխարհում, բերդեր, Երևան, արքայի, խնջույքներ, արքայական, դրոշմված, բարձրիկ, անընդմեջ, հեքիաթ, գառնարած, վռնդել, նժույգը, զրույց, հավերժող:*

2-րդ առաջադրանքի առավելագույն միավորը 8 է, որից ամեն սխալի կամ լուծման բացակայության համար հանվում է 1 միավոր: Լուծումներն են՝ ծննդավայր – *օրրան,* ամրոց – *բերդ,* խրախճանք – *խնջույք,* ավանդել – *պատգամել,* ոսոխ – *թշնամի,* հնազանդեցնել – *սանձել,* անկախ – *ինքնիշխան,* վտարել - *վռնդել:*

3-րդ առաջադրանքի առավելագույն միավորը 5 է, որից ամեն սխալի կամ լուծման բացակայության համար հանվում է 1 միավոր: Լուծումներն են՝ անուժ – *հզոր,* ավերել – *կառուցել,* հրավիրել – *վռնդել,* մերձակա – *հեռավոր,* նորօրյա – *հնագույն:*

4-րդ առաջադրանքի առավելագույն միավորը 7 է, որից ամեն սխալի կամ լուծման բացակայության համար հանվում է 1 միավոր: Հնարավոր լուծումներն են՝ *երկրից (երկիր), մարդկություն (մարդիկ), հնագույն (հին), օրրան (օրոր), մեկ (միակ), ինքնիշխան (ինքըն), կառուցել (կառույց), փորագրել (գիր), ծննդյան (ծնունդ (ծին)), լճից (լիճ), դրեցի (դիր), ջրեր (ջուր), բարձրիկ (բարձըր), ապավինել (ապավեն), գառնարած (գառըն), Դավթի (Դավիթ), սրով (սուր), զրույց (զուր), նստել (նիստ), աստղեր (աստըղ):*

5-րդ առաջադրանքի առավելագույն միավորը 8 է, որից ամեն սխալի կամ լուծման բացակայության համար հանվում է 1 միավոր: Հնարավոր լուծումներն են՝ *մարդկ-**ություն**, հնա-**գույն**, օրր-**ան**, մեկ (մի-**ակ**), **ան**-սանձ, ինքնիշխ-**ան**, կառ-**ույց**-ել, ծն-**ունդ**, վկայ+**ական**, խնջ-**ույք**, արքայ+**ական**, հետ-**ք**, պետ-**ություն**, բարձր-**իկ**, **ան**-**ընդ**-մեջ, հրաշ-**ք**, կայծ-**ակ**, **ան**-համար, զոր-**ք**, տիեզեր-**ական**, ճառագ-**այթ**, Բյուր-**ական**, զր+**ույց**, հեռ-**ավոր**, մոլ-**որ**-**ակ**:*

6-րդ առաջադրանքի առավելագույն միավորը 6 է, որից ամեն սխալի կամ լուծման բացակայության համար հանվում է 1 միավոր: Հնարավոր լուծումներն են՝ *ինքն-իշխ-ան, փոր-ա-գր-ել, սեպ-ա-գիր, որ-տեղ, Տիգրան-ա-կերտ, գառն-արած, տի-եզեր-ական:*

7-րդ առաջադրանքի առավելագույն միավորը 2 է, որից ամեն սխալի կամ լուծման բացակայության համար հանվում է 1 միավոր: Լուծումներն են՝ *ապավինել, նժույգ:*

8-րդ առաջադրանքի առավելագույն միավորը 6 է, որից ամեն սխալի կամ լուծման բացակայության համար հանվում է 1 միավոր: Հնարավոր լուծումներից են՝ *սփյուռքահայեր, ամենահներ, տասնմեկեր, ձիասանձեր, ձորագետեր, նստատեղեր,*

միջնաբերդեր, վերնագրեր, սառցալճեր, արջառրսեր, ազնվացեղեր, ոտնահետքեր, սառցածովեր, անձրևաջրեր, գյուղապետեր, արքայազահեր, ամենաբարձրեր, որսասարեր, մանրակայծեր, խաղասրեր, վարելահողեր, հեծելազորքեր, լեռնալանջեր, աշխատօրեր, գետեզրեր, կքանիստեր, գիսաստղեր:

9-րդ առաջադրանքի առավելագույն միավորը 3 է, որից ամեն սխալի կամ լուծման բացակայության համար հանվում է 1 միավոր: Հնարավոր լուծումներն են՝ *հայանալ, բերդանալ, սեպագրել, լճանալ, արքայանալ, ձկանալ, ցեղել, արյունել, ծովանալ, ջրել, սարանալ, հեքիաթանալ, կայծակել, սրել, հողել, թշնամանալ, ճառագայթել, նժույգել, զրուցել, աստղանալ, ազգանալ:*

10-րդ առաջադրանքի առավելագույն միավորը 5 է, որից ամեն սխալի կամ լուծման բացակայության համար հանվում է 1 միավոր: Լուծումներն են՝ *է, գալ, ասել, կամ (լինել), դնել:*

11-րդ առաջադրանքի առավելագույն միավորը 5 է, որից ամեն սխալի կամ լուծման բացակայության համար հանվում է 1 միավոր: Լուծումներն են՝ *դրոշմված, ողողվող, պայքարելիս, վռնդելով, հավերժող:*

12-րդ առաջադրանքի առավելագույն միավորը 5 է, որից ամեն սխալի կամ լուծման բացակայության համար հանվում է 1 միավոր: Լուծումներն են՝ *ես, դու, ինքը, դա, ով:*

13-րդ առաջադրանքի առավելագույն միավորը 5 է, որից ամեն սխալի կամ լուծման բացակայության համար հանվում է 1 միավոր: Հնարավոր լուծումներն են՝ *է, գալ, կամ (լինել), պայքարել, ապավինել, նստել, հավերժել:*

14-րդ առաջադրանքի առավելագույն միավորը 25 է, որից 6-ը տրվում է հետաքրքիր մտահղացման ու ստեղծագործական լուծման, 5-ը՝ հարուստ բառապաշարի, 5-ը՝ տրամաբանական, ոճական ու քերականական անթերիության, 5-ը՝ ուղղագրական անսխալության, 4-ը՝ կետադրական անսխալության համար: Ամեն մի ոճական, տրամաբանական թերության, քերականական, կետադրական սխալի համար հանվում է 0,5 միավոր, ուղղագրական ամեն սխալի համար՝ 1 միավոր՝ մինչև տվյալ տեսակին հատկացված միավորների սպառվելը:

Բոլոր առաջադրանքներից հավաքված միավորների ընդհանուր գումարը պետք է բաժանել 5-ի՝ համապատասխանեցնելու համար գնահատման 20-միավորանոց համակարգին:

Օրինակ՝ 9+8+3+5+6+5+0+5+1+3+4+3+4+22=78:5=15,6≈16 միավոր: